ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.12.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 118/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Մակրոֆուդ» ՍՊԸ-ի 05.12.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-118/16), Երևանի քաղաքապետարանի 14.12.2016թ. թիվ 02/61-83425h գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Դեագա» ՍՊԸ-ի 08.12.2016թ. գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի փաստաբան Ա. Մարգարյանին ուղղված 13.12.2016թ. թիվ 11-2/38501-16 գրությունը և ԳԲԽ-118/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 22.12.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Մակրոֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Մակրոֆուդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 05.12.2016թ. բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/3» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/2» ծածկագրերով ընթացակարգերին: Ի թիվս այլ մասնակիցների՝ ընթացակարգին մասնակցել է նաև «Դեագա» ՍՊԸ-ն, որն ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած, իսկ այնուհետև նաև՝ ընտրված մասնակից:

Ընկերությունը Պատվիրատուից պահանջել է իրեն տրամադրել «Դեագա» ՍՊԸ-ի կողմից, որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթղթեր, ներկայացված նախկինում կատարված համանման (նույնատիպ) պայմանագրերի պատճենները, որոնց ուսումնասիրման արդյունքում Ընկերությունը պարզել է, որ դրանք իրականում չեն կատարվել:

Որպես բողոքի իրավական հիմք՝ Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետը:

Ընկերությունը բողոքով նշել է, որ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերության կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին կներկայացվի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրվելիք տեղեկանքը, որով կհաստատվի բողոքով ներկայացված փաստերը:

«Մակրոֆուդ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/2» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/3» ծածկագրերով ընթացակարգերի արդյունքներով պայմանագրեր կնքելու գործընթացը, ինչպես նաև դադարեցնել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/2» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/3» ծածկագրերով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների կողմից «Դեագա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից, բավարար գնահատված մասնակից ճանաչելու և «Դեագա» ՍՊԸ-ի հետ պայմանագրեր կնքելու մասին որոշումները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-118/16 բողոքը քննող հանձնաժողովի 09.12.2016թ. ժամը 17:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև խնդրել է Խորհրդին՝ տրամադրել ժամանակ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրելիք տեղեկանքը ներկայացնելու համար:

2. <u>«Դեագա» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Դեագա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) 08.12.2016թ. գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել է պայմանագրեր և այլ փաստաթղթեր, որոնք, ըստ Կազմակերպության, հաստատում են «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով Կազմակերպության կողմից ներկայացված պայմանագրի հավաստի և կատարված լինելու փաստը:

Տվյալ ծածկագրով ընթացակարգի համար Կազմակերպությունը, որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացրել է «Դեագա» ՍՊԸ-ի և «Առնիկա» և «Վերտիկալ» ՍՊ ընկերությունների միջև կնքված և կատարված պայմանագրերը:

«Վեռտիկալ» ՍՊԸ-ի հետ պայմանագիրը կնքվել և կատարվել է 2014թ. և դրա կատարման ապացույց Կազմակերպությունը ներկայացրել է 2014թ. ընթացքում «Դեագա» ՍՊԸ-ի կողմից «Վեռտիկալ» ՍՊԸ-ին ուղարկված թվով 33 հատ արտահանման հայտարարագրեր, որոնց մաքսային արժեքը համապատասխանում է Կազմակերպության և «Վեռտիկալ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի թվին: Ընդ որում բոլոր հայտարարագրերը հաստատված են մաքսային մարմնի կողմից:

Կազմակերպությունը վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ հայտարարագրերում հստակ երևում է վաճառվող սննդամթերքի գումարը և այն կազմում է 692 007 639,8 ՀՀ դրամ, որը համապատասխանում է պայմանագրում նշված գումարին:

Կազմակերպությունը ներկայացրել է նաև վերջինիս բանկային հաշվի քաղվածքը, որով երևում է «Վեռտիկալ» ՍՊԸ-ի կողմից Կազմակերպությանը գումարների փոխանցումը:

Կազմակերպությունը ներկայացրել է նաև 2014թ. համար հարկային տեսչությանը ներկայացրած շահութահարկի գծով հաշվետվությունը:

Նույն ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված «Առնիկա» ՍՊԸ-ի հետ կնքված և կատարված սննդամթերքի մատակարարման պայմանագրի կատարումն հավաստելու համար՝ Կազմակերպությունը կից ներկայացրել է 2016թ. արտահանման հարկային հայտարարագրերը և հարկային տեսչություն ուղարկված ծանուցումները, որոնց գումարային արժեքը կազմում է 110 886 255 ՀՀ դրամ, որը նույնպես համապատասխանում է պայմանագրով սահմանված գնին:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 09.12.2016թ. գրությամբ «Դեագա» ՍՊԸ-ն խնդրել է Կազմակերպությանը ներառել թիվ ԳԲԽ-118/16 բողոքի քննության գործով որպես երրորդ կողմ:

Կազմակերպության ներկայացուցիչը, ներկա գտնվելով ԳԲԽ-118/16 բողոքը քննող հանձնաժողովի 09.12.2016թ. ժամը 17:30-ի նիստին, պնդել է, որ Կազմակերպության կողմից որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթղթեր վիճարկվող երկու ընթացակարգերով ներկայացված պայմանագրերը համապատասխանում են իրականությանը և սահմանված կարգով կատարվել են, որը հաստատվում է կազմակերպության կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերով:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.12.2016թ. թիվ 02/61-83425h գրությամբ «Մակրոֆուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/2» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/3» ծածկագրերով գնման ընթացակարգերի շրջանակներում «Դեագա» ՍՊԸ-ն որոշ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից:

Կազմակերպության կողմից ներկայացվել են որակավորման փաստաթղթերը, որոնցում գնահատող հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն չի արձանագրել:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-118/16 բողոքը քննող հանձնաժողովի 09.12.2016թ. ժամը 17:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

4. ԳԲԽ-118/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 22.12.2016թ. եզրակացությունը և առաջարկել՝ «Մակրոֆուդ» ՍՊԸ-ի կողմից 05.12.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

5. ԳԲԽ-118/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-118/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- *Երևանի քաղաքապետարանի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների, մասնակցել են նաև «Մակրոֆուդ» ՍՊԸ-ն և «Դեագա» ՍՊԸ-ն:*

1. Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով Կազմակերպության կողմից ներկայացված հայտի N 4 հավելվածը՝ գնային առաջարկը թվով 193 չափաբաժինների համար կազմել է ***1 564 596 000 դրամ:***

2. 01.11.2016թ. Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով «Դեագա» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած N 3.1 հավելվածով՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգ 1-ի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է սննդամթերքի մատակարարում «Առնիկա» ՍՊԸ-ի, «Վեռտիկալ» ՍՊԸ-ի հետ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է ***802 893 894,8 ՀՀ դրամ*** և պարտավորվում է նշված ծածկագրով Ընթացակարգ 1-ի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդ որում, դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, ***պակաս չէ*** տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած ***գնային առաջարկի***

հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

3. Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի կողմից 06.12.2016թ. ժամը 9:30-ին տեղի ունեցած նիստի 5-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգ 1-ի թվով 66 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Դեագա» ՍՊԸ-ին:

- *Երևանի քաղաքապետարանի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ կազմակերպությունների, մասնակցել են նաև «Մակրոֆուդ» ՍՊԸ-ն և «Դեագա» ՍՊԸ-ն:*

1. Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով Կազմակերպության կողմից ներկայացված հայտի N 4 հավելվածը՝ գնային առաջարկը թվով 73 չափաբաժինների համար կազմել է ***41 464 500 դրամ:***

2. 08.11.2016թ. Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով «Դեագա» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է N 3.1 հավելվածով՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգ 2-ի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է սննդամթերքի մատակարարում «Ստեպ-Պրոգրես» ՍՊԸ-ի հետ, որի ընդհանուր արժեքը կազմել է ***58 299 000 ՀՀ դրամ*** և պարտավորվում է նշված ծածկագրով Ընթացակարգ 2-ի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդ որում, դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, ***պակաս չէ*** տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած ***գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս***

չէ փվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

3. Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 23.11.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ «Դեագա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրին կցված է պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունը, սակայն հնարավոր չէ պարզել իրականացված մատակարարումը կատարված է ամբողջությամբ, թե ոչ, քանի որ մատակարարման պայմանագրով նշված չէ մատակարարվելիք ապրանքի քանակական տվյալները, ինչպես նաև ապրանքի ընդհանուր գումարը, որի շրջանակներում պետք է իրականացվի պայմանագիրը և պայմանագրի գործողության ժամկետն ***է սահմանվել մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը***: Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով ***մինչև 24.11.2016թ.*** ներառյալ շտկել անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից 24.11.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 6 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Դեագա» ՍՊԸ-ն որակավորման պահանջների մասով շտկել է անհամապատասխանությունը: Ներկայացված փաստաթղթերում անհամապատաս-խանություններ չեն հայտնաբերվել: Նույն արձանագրության 5-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգ 2-ի թվով 12 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Դեագա» ՍՊԸ-ին:

- Փաստաբան Արթուր Մարգարյանը 05.12.2016թ. դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ խնդրելով հայտնել, արդյոք «Դեագա» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00442959, ք. Երևան, Էրեբունի փող. 34-62) կողմից 2016թ. ընթացքում Ռուսաստանի Դաշնություն արտահանվել է «ցածր յուղայնությամբ պանիր՝ հալած պանրի արտադրության համար» տեսակի ապրանք, թե ոչ:

- Ի պատասխան Ա. Մարգարյանի վերը նշված գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 13.12.2016թ. թիվ 11-2/38501-16 գրությամբ հայտնել է, որ «Դեագա» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00442959, ք. Երևան, Էրեբունի փող. 34-62) կողմից 2016թ. ընթացքում Ռուսաստանի Դաշնություն արտահանվել է «ցածր յուղայնությամբ պանիր»:

• ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-118/16 բողոքը քննող հանձնաժողովի, 09.12.2016թ. կայացրած որոշմամբ բավարարել է «Մակրոֆուդ» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

6.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը քննելով «Մակրոֆուդ» ՍՊԸ-ի 05.12.2016թ. ներկայացրած բողոքը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած

որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, ***որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:*** Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, ***պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից,*** որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, ***պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.***

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Ընթացակարգ 1-ի և Ընթացակարգ 2-ի Հրավերների 2.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Ընդ որում Մասնակցի՝

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ է համարվում **սննդամթերքի** մատակարարումը:

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«Մակրոֆուդ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Պատվիրատուից պահանջել է իրեն տրամադրել «Դեագա» ՍՊԸ-ի կողմից, որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացված նախկինում կատարված համանման (նույնատիպ) պայմանագրերի պատճենները, որոնց ուսումնասիրման արդյունքում Ընկերությունը պարզել է, որ դրանք իրականում չեն կատարվել, բացի այդ նշել է, որ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերության կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին կներկայացվի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրվելիք տեղեկանքը, որով կհաստատվի բողոքով ներկայացված փաստերը:

1. Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով Կազմակերպության կողմից ներկայացված հայտի N 4 հավելվածը՝ գնային առաջարկը կազմել է ***1 564 596 000 դրամ:***

Ընթացակարգ 1-ի շրջանակներում «Դեագա» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած N 3.1 հավելվածով՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է սննդամթերքի մատակարարում «Առնիկա» ՍՊԸ-ի և «Վեռտիկալ» ՍՊԸ-ի հետ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է ***802 893 894,8 ՀՀ դրամ ,*** ինչը պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի (***1 564 596 000 դրամ)*** հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային

առաջարկի քսան տոկոսից: Միաժամանակ Կազմակերպությունը ներկայացրել է օրենքով սահմանված որպես նախկինում կատարած համանման՝ «Ցածր յուղայնությամբ պանիր հալած պանրի արտադրության համար» ապրանքի ձեռքբերման «Վեռտիկալ» ՍՊԸ-ի հետ 16.01.2014թ. կնքված N 002/A/2014 Պայմանագրի պատճենը, որի ***ընդհանուր արժեքը կազմել է՝ 62422685,15 ռուբլի, իսկ պայմանագրի վերջնաժամկետը սահմանվել է մինչև 31.12.2014թ.:*** «Դեագա» ՍՊԸ-ն N 002/A/2014 Պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացրել է նաև տվյալ Պայմանագրի կողմերի հաստատած՝ Պայմանագրի սահմանված ժամկետում՝ ***31.12.2014թ.*** կատարումը հավաստող ՀՀ Շենգավիթի նոտարական տարածքի կողմից վավերացված հանձնման-ընդունման արձանագրություն N 1-ի ռուսերենից հայերեն թարգմանության պատճենը, ըստ որի՝ համաձայն 16.01.2014թ. կնքված N 002/A/2014 Պայմանագրի հանձնեց, իսկ գնորդը ընդունեց 649 051,9 կգ «Ցածր յուղայնությամբ պանիր» ապրանքը, որի գինը կազմել է՝ (***62422685,15 ռուբլի) 692 007 639,8 ՀՀ դրամ:***

Գործում առկա է 31.12.2014թ.-ի Պայմանագրով ապրանքը գնորդին հանձնելու ամրագրում ԱԿՏ N 1-ը, որով «Վեռտիկալ» ՍՊԸ-ն և «Դեագա» ՍՊԸ-ն հաստատել են, որ N 002/A/2014 16.01.2014թ. կնքված պանրի առաքման պայմանագրի շրջանակներում գնորդին է հանձնվել ցածր յուղայնությամբ պանիր:

Կազմակերպությունը ներկայացրել է նաև 2014թ. ընթացքում «Դեագա» ՍՊԸ-ի կողմից «Վեռտիկալ» ՍՊԸ-ին ուղարկված արտահանման հայտարարագրերի պատճենները, որոնք հաստատված են մաքսային մարմնի կողմից:

Ըստ Կազմակերպության կողմից ներկայացված հայտարարագրերի վաճառվող սննդամթերքի գումարը կազմել է 692 007 639,8 ՀՀ դրամ, ինչը համապատասխանում է պայմանագրում նշված գումարին:

Կազմակերպությունը ներկայացրել է նաև օրենքով սահմանված որպես նախկինում կատարած համանման՝ «Ցածր յուղայնությամբ պանիր հալած պանրի արտադրության համար» ապրանք ձեռքբերելու նպատակով «Առնիկա» ՍՊԸ-ի հետ ***20.01.2016թ. կնքված N 002/A/2016 Պայմանագրի պատճենը, որի ընդհանուր արժեքը կազմել է՝ 15159000 ռուբլի, իսկ պայմանագրի գործողության ժամկետը***

սահմանվել է մինչև 30.09.2016թ.: «Դեագա» ՍՊԸ-ն N 002/A/2016 Պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացրել է նաև տվյալ Պայմանագրի կողմերի հաստատած՝ Պայմանագրի սահմանված ժամկետում՝ ***30.09.2016թ.*** կատարումը հավաստող ՀՀ Շենգավիթի նոտարական տարածքի կողմից վավերացված հանձնման-ընդունման արձանագրություն N 1-ի ռուսերենից հայերեն թարգմանության պատճենը, ըստ որի՝ համաձայն N 002/A/2016 20.01.2016թ. կնքված Պայմանագրի հանձնեց, իսկ գնորդը ընդունեց 156 000 կգ «Ցածր յուղայնությամբ պանիր» ապրանքը, որի գինը կազմել է՝ (***15159000 ռուբլի) 110 886 255 ՀՀ դրամ:***

Գործում առկա է 30.09.2016թ. Պայմանագրով ապրանքը գնորդին հանձնելու ամրագրում ԱԿՏ N 1-ը, որով «Առնիկա» ՍՊԸ-ն և «Դեագա» ՍՊԸ-ն հաստատել են, որ N 002/A/2016 20.01.2016թ. կնքված պանրի առաքման պայմանագրի շրջանակներում գնորդին է հանձնվել ցածր յուղայնությամբ պանիր:

2. Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով Կազմակերպության կողմից ներկայացված հայտի N 4 հավելվածը՝ գնային առաջարկը կազմել է ***41 464 500 դրամ:***

Ընթացակարգ 2-ի շրջանակներում «Դեագա» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած N 3.1 հավելվածով՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է սննդամթերքի մատակարարում «Ստեպ-Պրոգրես» ՍՊԸ-ի հետ, որի ընդհանուր արժեքը կազմել է ***58 299 000 դրամ,*** ինչը պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի (***41 464 500 դրամ)*** հիսուն տոկոսից, և պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Կազմակերպության կողմից Պատվիրատուին է տրամադրվել «Ստեպ-Պրոգրես» ՍՊԸ-ի հետ «Անյուղ պանիր» ապրանքի ձեռքբերման 02.05.2016թ. կնքված պայմանագիրը, որի համար վերջնաժամկետ է սահմանվել մինչև **31.12.2016թ.**, դրա պատշաճ կատարումը հավաստող 26.06.2016թ.-ի հանձնման-ընդունման

արձանագրություն N 1-ի պատճենը, համաձայն որի՝ մատակարարը հանձնել է, իսկ գնորդն ընդունել է հետևյալ ապրանքաքանակը՝ «Անյուղ պանիր», 88422կգ, 58 299 000 ՀՀ դրամի, ինչպես նաև ապրանքի մատակարարման Հարկային հաշվի պատճենները:

Խորհուրդը գտնում է, որ «Դեագա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրին կցված 26.06.2016թ.-ի երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման արձանագրություն N 1-ից և ապրանքի մատակարարման Հարկային հաշիվներից հնարավոր չէ պարզել, արդյոք վերը նշված պայմանագիրը կատարված է ամբողջությամբ, թե ոչ, քանի որ տվյալ պայմանագրում նշված չէ պայմանագրի ընդհանուր գինը, մատակարարվելիք ապրանքի քանակը, բացի այդ նույն պայմանագրի համար վերջնաժամկետ է սահմանվել ***մինչև 31.12.2016թ.:***

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը ***23.11.2016թ. ժամը 11:00-ին*** տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ «Դեագա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրին կցված է պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունը, սակայն հնարավոր չէ պարզել իրականացված մատակարարումը կատարված է ամբողջությամբ, թե ոչ, քանի որ մատակարարման պայմանագրով նշված չէ մատակարարվելիք ապրանքի քանակական տվյալները, ինչպես նաև ապրանքի ընդհանուր գումարը, որի շրջանակներում պետք է իրականացվի պայմանագիրը: Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ վերը նշված պայմանագրի գործողության ժամկետն է սահմանվել մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը, ուստի որոշվեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով մինչև 24.11.2016թ. ներառյալ շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից 24.11.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 6 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Դեագա» ՍՊԸ-ն որակավորման պահանջների մասով շտկել է անհամապատասխանությունը: Ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Նույն արձանագրության 5-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգ 2-ի թվով 12 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Դեագա» ՍՊԸ-ին:

Գործում առկա է նաև փաստաբան Արթուր Մարգարյանի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ուղղված 05.12.2016թ. գրությունը, որով խնդրել է հայտնել, արդյոք «Դեագա» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00442959, ք. Երևան, Էրեբունի փող. 34-62) կողմից 2016թ. ընթացքում Ռուսաստանի Դաշնություն արտահանվել է «ցածր յուղայնությամբ պանիր՝ հալած պանրի արտադրության համար» տեսակի ապրանք, թե ոչ: Ի պատասխան նշված գրության ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 13.12.2016թ. թիվ 11-2/38501-16 գրությամբ պատասխանել է, որ «Դեագա» ՍՊԸ-ի կողմից 2016թ. ընթացքում Ռուսաստանի Դաշնություն արտահանվել է «ցածր յուղայնությամբ պանիր»:

Ինչ վերաբերում է «Մակրոֆուդ» ՍՊԸ-ի բողոքով ներկայացրած այն պնդմանը, որ «Դեագա» ՍՊԸ-ի կողմից, որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթղթեր ներկայացված նախկինում կատարված համանման պայմանագրերն իրականում չեն կատարվել, ապա այս կապակցությամբ Խորհուրդը հայտնում է, որ Ընկերության կողմից տվյալ փաստը հաստատող որևէ ապացույց չի ներկայացվել:

Պատվիրատուն *«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում* տվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն, որի արդյունքում Կազմակերպությունը որպես նախկինում կատարված ներկայացրել է «Առնիկա» ՍՊԸ-ի հետ 20.01.2016թ. կնքված N 002/A/2016 և «Վեռտիկալ» ՍՊԸ-ի հետ 16.01.2014թ. կնքված N 002/A/2014 ***համանման Պայմանագրերը:***

Պատվիրատուն Կենտրոնին ուղղված 14.12.2016թ. թիվ 02/61-83425h գրությամբ հայտնել է, որ Կազմակերպության կողմից ներկայացվել են որակավորման փաստաթղթերը, որոնցում Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն չի արձանագրել:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ուստի Ընկերության բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մակրոֆուդ» ՍՊԸ-ի 05.12.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամներ՝ **Հովհաննիսյան Ռուզաննա**

Սարգսյան Արմեն